№ 139 Օգոստոսի 12 (24) 1880 Օգոստոսի 12 (24) № 139

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լրագիր և դպրոց։—Ներքին տեսութիւն։ Նամակ Վարշավայից։ Նամակ Երևանից։ Նամակ Բագուից։—Արտաքին տեսութիւն։ «Голосъ» լրագրի թղթակցութիւնը։ Ամերիկա։ Յունաստան։ —«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։ —Բանասիրական։ Հայրենասէր տիկին։

ԼՐԱԳԻՐ ԵՒ ԴՊՐՈՑ

Մեր հասարակութեան մէջ մենք միշտ լսում ենք այսպիսի խօսքեր. «Լաւ է մի վատ դպրոց, քան թէ բոլորովին դպրոց չը լինի», կամ «լաւ է մի վատ լրագիր, քան թէ բոլորովին լրագիր չը լինի»։

Այդ տեսակ մարդիկ հիմնվում են հետևեալ դատողութեան վրա. հայոց դպրոց, ինչքան էլ վատ լինի, դարձեալ մի բան, խօ՛, կը սովորեցնի երեխաներին, հայոց լրագիր, ինչքան վատ էլ լինի, ազգային լեզու, խօ՛, կը տարածի ամբոխի մէջ....

Բայց այդ ասողները չեն մտածում որ դպրոցը կարող է թերի, անկատար և մինչև անգամ վնասակար ուսում տալ մանուկներին, չեն մտածում որ լրագիրը հայերէն լեզու ամբոխին սովորեցնելու հետ միասին, կարող է և վնասակար մտքեր տարածել նոյն ամբոխի մէջ։

Երևակայեցէք ձեզ մի օրիորդական դպրոց, որտեղ ուսում են առնում մեր ազգաբնակութեան ամենաադքատ դասի աղջիկները։ Նրանք սովորում են դպրոցում կրօն, ռուսաց և հայոց լեզուներ, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, պար և երգեցողութիւն, բայց ոչ մի արհեստ չեն սովորում, որով, դպրոցից դուրս գալուց յետոյ, կարողանային պահպանել իրանց ապրուստը։ Աղջկայ մէջ նրան տուած ուսումով զարթեցնում է նոր զգացմունքներ, կեանքի յարմարութեան նոր պահանջներ, ծնեցնում է նրա մէջ նոր ձգտումներ,—բայց ոչ մի զէնք չէ տալիս նրա ձեռքը, որ ուսում վերջացնելուց յետոյ, ինքն իր ոտքերի վրա կանգնի։ Նրա մէջ զարթեցրել է նոր ինստինկտներ և կրկին շպրտում է նրան նրա ծնողների աղքատ և կեղտոտ խրճիթը... Նա զզվում է արդէն այդ կեանքից, բայց ոչ իրան, ոչ էլ իր ծնողներին օգնել չէ կարող, որովհետև օրիորդ է դարձել, բայց ոչինչ չէ սովորել որ պէտք գայ իր կեանքում.... Այդ տեսակ դպրոց աւելի վնասակար է ամբոխի համար, քան թէ եթէ ոչինչ դպրոց չը լինէր։ Աղջիկը ընտելացած է նոր կեանքի դաղափարին, նոր ճաշակներ է ստացել, բայց չէ կարող լրացնել այդ իր նոր պահանջները, իր մէջ զարթեցրած ճաշակին լրում տալ։ Եւ ահա նա ընկնում է շատ անգամ անբարոյականութեան մէջ։

Մի՞թէ չէ կարելի ասել, որ լաւ է դպրոց չը լինի, ողորմելի ամբոխը կատարելապէս տգէտ մնայ, քան թէ նրան տրվի մի ուսում, որով անբարոյականանում է նրա նոր սերունդը։

Ամենափնասակար բան է, երբ զարթեցնում են ամբոխի մէջ նոր պահանջներ, բայց միջոց չեն տալիս այդ պահանջները լրացնել....

Երևակայեցէք ձեզ մի լրագիր, որի նպատակը չէ նոր, լուսաւոր, օգտաւէտ մտքեր յայտնել ամբոխին, այլ նրա նպատակն է շողոքորթել ամբոխի բոլոր ստոր ինստինկտներին, դրդել նրա այնպէս էլ զօրեղ մոլեռանդութիւնը, ֆանատիկոսութիւնը, ատելութիւնը դէպի իր եղբայրները, ձայնակցել նրա բոլոր վատ, վայրենի հակումներին, նրա նախապաշարմունքներին, միշտ հոսանքի ետևից գնալ, տգէտ ամբոխին դուր գալու և նրա համակրութիւնը վայելելու համար։

Մի՞թէ այդ տեսակ լրագիր կարելի է օգտաւէտ համարել, մի՞թէ կարելի է ասել «դարձեալ պէտք է նրան պահպանել, որովհետև հայերէն լրագիր է։»

Լաւ է որ ժողովուրդը տգէտ մնայ, քան թէ կրթվի մոլեռանդութեան, վատ հակումների, նախապաշարմունքների և ատելութեան մէջ։

Մի՞թէ կարելի է օգտակար համարել այն լրագիրը, որ աշխատում է մի նոր, արդար միտք չը յայտնել, որովհետև նա հակառակ կը լինի ժողովրդի հասկացողութեանը, այլ աշխատում է ժողովրդի հասկացողութեանը համեմատ խաւար մտքեր յայտնել, որպէս զի ժողովրդականութիւն ունենայ բթամիտ ամբոխի մէջ։ Ուրեմն նա չէ զարգացնում ամբոխը, բայց աւելի էլ բթացնում է նրան, շողոքորթելով նրա բոլոր ստոր հակումներին, և յետոյ պարծենում է թէ ժողովրդականութիւն ունի։

Մի՞թէ կարելի է օգտաւէտ համարել մի դպրոց և մի լրագիր, որոնք երկուսն էլ անբարոյականացնում են ժողովուրդը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՐՇԱՎԱՅԻՑ

30 յուլիսի

Դեռ անցեալ տարի յուլիսի 2/14-ին իմ Վարշավա եղած ժամանակս լոյս տեսաւ լեհացոց «Կլոզի» «Klozy» պատկերազարդ շաբաթաթերթի № 737, որի մէջ նկարված էին մեր հայերիս համար շատ հետաքրքիր երկու տապանաքարերի արձանագրութեան պատկերներ, որոնց պատճէնը ահա ուղարկում եմ Նամակովս։ Դա հայոց հնութիւն է, երկու գերեզման, թաղված Վարշավայի ամենահին և մեծ եկեղեցիների մէկի մէջ, որ կոչվում է Դոմինիկեանների եկեղեցի։ Երկու հարիւր տարի առաջ այդ միաբանութիւնը տիրելիս է եղել այդ եկեղեցուն, յետոյ լեհացոց հոգևորականները կարողացել են մեծ ջանքով նրանց արտաքսել և իրանք տիրել։ Մինչև 1603 թիւն եկեղեցին չինված է եղել փայտից, իսկ յետոյ 1606-ին լեհաց հոգևորները, ձիաների սանձերը արձակ, փետուրները փռփռուն, սուրերը մերկ, աչքերը կայծակեալ, սարսափելի։

Տիկին Ժերարը մնաց ոտքի վրա կանգնած, անշարժ։

«Ի՞նչ էք կամենում, հարցրեց նա ձիուց ցած իջնող աստիճանաւորին (l'officier)։

—(Parbleu) պատասխանեց նա գեղեցիկ ֆրանսերէն լեզուով, ես կամենում եմ տեղաւորել այստեղ իմ գունդը։ Մենք քաղցած ենք, իսկոյն բերէք մեզ լաւ ճաշ։

—Ես ձեզ ոչինչ չեմ տայ, պատասխանեց հպարտութեամբ ազնիւ կինը։ Դուք տէր էք, վերցրէք։

—Օ՛հ, օ՛հ, եթէ դուք մեզ հետ այդ կերպ կը խօսէք, զգոյշ կացէք։ Մեզ ասացին, որ այստեղ գտնվում են ազատ հրացանաձիգներ։

—Չը կան այստեղ։ Փնտռեցէք։

—Դուք տեսած կը լինէք նոցա անշուշտ մօտակայ անտառներում։

—Ես չեմ տեսել։

Նոյն վայրկեանին լսվեցան դաստակերտը շրջապատող լեռնազագաթներից հրացանների արձակումն։

«Դուք խաբում էիք», խօսեց աստիճանաւորը իր ատրճանակի փողը մեկնելով դէպի տ. Ժերարի կուրծքը։

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ

II

Տան և հինգ օր անցաւ Ֆրեշվիլերի հարուածից յետոյ և Ֆրանսիան զգաց իր գլխի վրա արշաւանքի հետևանքները։

Մինչև որ թագաժառանգի գունդը անցնում էր Վոգեզները Շտէֆնիցի և Ֆրիդերիկ-Կարլոսի զորքերի հետ միանալու համար Մեցում, Վերդերը իջնում էր դէպի Ստրազբուրգ նորան շրջապատելու։

Ամբողջ Ալզասը, ճչմարիտ, ալեկոծութեան մէջ էր, որովհետև ծերերը յիշում էին առաջին արշաւանքի եղեռնագործութիւնները։

Ժողովուրդը գաղթում էր, ուշքերնին կորցրած, դէպի մերձակայ անտառները։

Խանութները փակում էին, շարժական կայքերը բարձում էին սայլակների վրա։

Գիւղացիները ցնորուածի պէս փախչում էին, քշելով իրանց առաջը, ինչպէս Աբրահամի ժամանակը, իրանց անասուններին և աղաղակում.

«Դէպի՛ սարը, դէպի՛ սարը։»

Վոգեզների քանցնելի ճանապարհների վրա երևում էին լացող կանայք, յոգնած, ուշաթափ, ամեն քայլափոխում վայրընկնող երեխաներ, դաժան դէմքերով տղամարդիկ։

Երեկոյեան հինգ ժամն էր։ Արևը դեղեցիկ ճառագայթներով Նեիվելերի թարմ հովիտների վրա լոյս և ստուեր էր սփռում։

Ինչ խաղաղութիւն։

Կարծես թէ դաստակերտը դատարկ էր։

Կրիստինայի գոյնզգոյն ծաղիկներով լի ծաղկանոցը բուրում էր եղիսպակի, մեխակի, գերանիի և այծմօրուքի հոտերով։

Մի քանի հաւեր, բագումը, կացահարում էին արագութեամբ. մի աշխոյժ և հպարտ աքաղաղ հնչեցնում էր իր սրաձայն աղաղակը։

Բլուրների կողմը չիկազոյն կովերը արածում էին և դաշտը իր ուռենիների փունջերով, ոսոսի վարագոյրներով, փայլում էր ոսկենման և պարզ գոյներով։

Այդպիսի ուրախ, խաղաղ տեսարանի առջևը ինչպէս կարելի էր երևակայել, թէ մի քանի մղոն հեռու կատարվել են մարդկային փոթորիկներ, զարհուրելի պատերազմ, սարսափելի տանջանքներ։

Ինչպէս երևակայել, որ այդպիսի խաղաղ կտուրի տակ մարդ կարողանայ զգալ սրտի սարսափելի տանջանքներ։

Ֆրանցը գնացել էր։ Նա մտել էր ազատ հրացանաձիգների զօրքի մէջ։

Տիկին Ժերարը ուղարկել էր Կրիստինային մի բարեկամի մօտ, որ բնակվում էր Վոգեզների զառիվայրում գտնված գիւղերից մէկի մէջ։

Ուրեմն նա միայնակ էր մնացել դաստակերտում։

Թշնամին, ասում էին, յափշտակել էր Նեկվելեր գիւղաքաղաքը։ Նա մօտենում էր։

Տիկին Ժերարը շատ չփոթված էր։ Խօսում էին ազատ հրացանաձիգների և պրուսացոց մէջ անցեալ գիշեր մօտակայ անտառներում պատահած պատերազմի մասին։

Ժամանակ առ ժամանակ նա մօտենում էր դրան չէմքին, ականջ էր դնում իր նայածքով ինչ որ հարցնում էր ծառերով պսակած լեռնագագաթներին և ճանապարհին, որ տանում էր դէպի գիւղաքաղաքը։

Յանկարծ նա լսեց մի ինչ որ խուլ ձայն, որ շարժեց գետինը։ Շուտով նա տեսաւ սրաձայր սաղաւարտներ, որ փայլեցին ճանապարհը շրջապատող ծառերի միջից։

Նոքա գալիս էին։

Նա սպասում էր նոցա անվրդով սրտով։

Սա սեաւ հեծելազօրների գունդն էր։

Նախ երկու ուլաններ գիմեցին դէպի բնակարանը, ձիաների սանձերը արձակ, փետուրները փռփռուն, սուրերը մերկ, աչքերը կայծակեալ, սարսափելի։

Տիկին Ժերարը մնաց ոտքի վրա կանգնած, անշարժ։

«Ի՞նչ էք կամենում, հարցրեց նա ձիուց ցած իջնող աստիճանաւորին (l'officier)։

—(Parbleu) պատասխանեց նա գեղեցիկ ֆրանսերէն լեզուով, ես կամենում եմ տեղաւորել այստեղ իմ գունդը։ Մենք քաղցած ենք, իսկոյն բերէք մեզ լաւ ճաշ։

—Ես ձեզ ոչինչ չեմ տայ, պատասխանեց հպարտութեամբ ազնիւ կինը։ Դուք տէր էք, վերցրէք։

—Օ՛հ, օ՛հ, եթէ դուք մեզ հետ այդ կերպ կը խօսէք, զգոյշ կացէք։ Մեզ ասացին, որ այստեղ գտնվում են ազատ հրացանաձիգներ։

—Չը կան այստեղ։ Փնտռեցէք։

—Դուք տեսած կը լինէք նոցա անշուշտ մօտակայ անտառներում։

—Ես չեմ տեսել։

Նոյն վայրկեանին լսվեցան դաստակերտը շրջապատող լեռնազագաթներից հրացանների արձակումն։

«Դուք խաբում էիք», խօսեց աստիճանաւորը իր ատրճանակի փողը մեկնելով դէպի տ. Ժերարի կուրծքը։

ական Իուլիան Բզովսկի ձեռքով նորոգվել է։ Այս հոգևորականը եկել է Գալիցիայից, Լվովի նահանգից, Զետկովսկի գաւառի Եազլովայ քաղաքից։—

Տապանաքարերի արձանագրութիւնը. «Սա է տապան ողորմած հոգի մեծ Խաթունին կողակցուն, պարոն Յակոբին, Մահտեսի Մինասին որդուն, Եազլովայ քաղաքին երեսփոխանին, յանգեալ ի Քս. թվ. ռծիզ-ին ամսս ապրիլի զ. օրն ուրբաթ։»

«Սա է տապան պարոն Յակոբին Մահտեսի Մինասի որդուն Եազլովու երեսփոխանին յանգուցեալ ի Քս. թ. ռծիզ-ին յունիսի իբ։»

Ինչպէս երևում է ամուսին այրը տասը տարուց յետոյ է վախճանվել կնոջից. ասում են, որ այս դոմինիկեանների եկեղեցին չինված է վերոգրեալ պարոն Յակոբի փողերով, որովհետև եղել է շատ հարուստ և անորդի և իր հարստութիւնը կտակել է եկեղեցուն, որ սկզբում պատկանելիս է եղել հայոց։ Չը կարողացայ իմանալ, թէ ինչպէս է անցել պապականների ձեռքը։ Ոմանք ասում են, թէ այդ գերեզմաններում թաղածներն են չինել այս եկեղեցին և մէջը թաղվել, վերջինը աւելի է հաւանական, որովհետև, եկեղեցու թէ դրսի և թէ ներսի դիրքը՝ բոլորը հայկական է, Վարշավայի ոչ մէկ եկեղեցիներին չէ նմանում։ Եկեղեցին շատ մեծ է. գտնվում է Փրետայ փողոցում, այնքան երկար է, որ սեղանի կողմն դուրս է գնում միւս փողոցը, որը կոչվում է «Պտարօ Մեստոյ»։ Որովհետև անցեալ տարի ես չը կարողացայ ոչ «Կլօզի» չաբաթաթերթն գտնել և ոչ անձամբ գնալ այն եկեղեցին հետազօտելուն,—իմ առաջին ցանկութիւնն էր, որ այս տարի անպատճառ բոլորն անձամբ տեսնէի. այս մտքով ես վեր առայ աստրախանցի երիտասարդ պ. Սարգիս Զիժեանցին և գնացինք եկեղեցու երեցփոխանի հետ մտանք մեծ տաճարը, որը իսկոյն նկարագրվեցաւ այս օտար աշխարհումս հայոց մայր եկեղեցու անագին մեծութեամբ։—Իմ առաջին հոգսը եղաւ գտնել գերեզմանները և շատ ըժուարութեամբ դուրս գրել վերնագրերը։ Յետոյ սկսեցինք մեր խուզարկութիւնը. առաջ մտանք աջակողմեան խորանը. բոլորը հայոց ձեով էր չինված. խորանի ետևի փոքր ներքնադռնով մտանք միւս անագին կամարակապ դահլիճը, որի պատերի վրա նկարված էին շատ եպիսկոպոսների պատկերներ, որոնց թագն և գաւազանը հայկականի նման էին. կարդացի նրանց անունները. շատերը լատին էին, ոմանք լեհացի, բայց երկուսի ներքնագիրը ցոյց տուեց, որ պէտք է հայեր լինեն. մէկն գրած էր Պօղոս իսկ միւսը՝ Օհանէս։—Ինձ այս դահլիճի համար ասեցին, որ ճիզվիտները այստեղ էին առնչում իրանց զոհերին. շատ հաւանական է, որովհետև զարհուրելի մի չինութիւն է։ Յետոյ դուրս եկանք այս դժոխքից, մտանք միւս խորանը որտեղ քահանաները զգեստաւորվում են. մեծ հայելիներով զարդարված էր, նստարանները գեղեցիկ էին։ Սկսեցինք քննել սեղանը. սկզբում եղել է հայոց կերպ, յետոյ փոքր ցածացրել են, բայց էլի բարձր է միւս եկեղեցիներից։

Այս եկեղեցում կար մէկ գեղեցիկ դրօշակ, հարցրի՝ սա ինչ է։ Պատասխանեցին կօշկակարների դրօշակն է և այս եկեղեցին այժմ անուանվում է կօշկակարների եկեղեցի։ Ահա թէ ինչ պատճառով. Կրակով քաղաքում լինում են երկու եղբայրներ իշխան (КНЯЗЬ) և հարուստ կալուածատէրեր. սրանք լինում են օրհնված կօշկակարների համքարում։ Երկու եղբայրներից, մէկը Կրիսպիան անունով իսկ միւս Կրիսպիանին, լինելով անժառանգ, իրանց բոլոր հարստութիւնը և կալուածները կտակում են բոլոր Լեհաստանի կօշկակարներին, որոնք չեն կարողանում երկար ժամանակ կառավարել այն ահագին կարողութիւնը, վատնում են, սկսում են սաստիկ չարչարել ստրուկներին, վերջապէս մեծ մասը վառվում է։ Այս է պատճառ, որ Լեհաստանում տարին մէկ անգամ կօշկակարները հոգեհանդիսատ են կատարում երկու եղբայր Կրիսպին Կրիսպիանին համար։ Վարչվում այն օրը բոլոր կօշկակարները, քանի մի հազար մարդ, գործարանները կողպում են, ֆրակով, սպիտակ փողպատով և ձեռնոցներով ժողովվում են այս եկեղեցում և փառաւոր հոգեհանդիսատ են կատարում, յետոյ ամբողջ օր լինում է սրանց համար մեծ տօնախմբութիւն։ Զարմանալի է, իշխան Կրիսպիանների կտակած հարստութեան նշոյլը անգամ չէ մնացել, բայց նրանց յիշատակն դարձեալ սուրբ են պահպանում։

Հ. Աբովեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

3 յունիսի

Կարդում ենք ձեր պատուական լրագրի մէջ, որ մեր թիւրքիաբնակ հայ եղբայրները հացի մասին այնպէս նեղ դրութեան մէջ են ընկած, որ անգամ իրանց հարազատ որդոց մարմնով են յագեցնում իրենց սովածութիւնը, վասնորոյ այսպիսի մի նեղ մրջոցում չէ կարող գտնվել մի մարդ, որ իրեն սիրտն ապառաժացնէ և իրեն կարեաց չափ օգնութիւն չը հասցնէ։ Մենք մի քանի անձինքս հաւաքելով մեր մէջ իւրաքանչիւրի կամաց չափով ընդամենը տասն և չորս բուբլի, որ նամակիս հետ ուղարկելով, խնդրում ենք հասուցանել մեր սովամահ եղբայրներին, և տպագրէք նուիրատուաց անունները ձեր լրագրի մի անկիւնում։ Ա. Պ. 1 ր., Ս. Բ. 1 ր., Գ. Խ. 1 ր., Ա. Բ. 1 ր., Ա. Մ. 1 ր., Ս. Մ 1 ր., Մ. Մ. 1 ր., Բ. Շ. 1 ր., Խ. Դ. 1 ր., Ս. Ս. 4 ր., Թ. Տ. 1 ր., Ե. Ֆ. 1 ր., Վ. Գ. 50 կ., Մ. Գ. 50 կ., Կ. Զ. 40 կ., Մ. Գ. 30 կ., Մ. Ա 20 կ., Մի ոմն 10 կ.։ Ընդամենը 14 բուբլի։

Յարգոյ խմբագիր, թէև նամակիս մէջ գրած եմ, որ չի գտնվի մի մարդ, որ իրան սիրտն ապառաժացնէ այսպէս մի նեղ միջոցում, արդարև չը կայ մի՛ այդպիսի մարդ, բայց մի և նոյն ժամանակ կան մարդիկ, որոնք նուէր հաւաքողին զայրացնում են իրանց մի քանի անտաշ խօսքերով, ինչպէս մեզ պատահեց պ. Օ. Մ-եանցի հետ։ Մենք դիմեցինք մեր Երևանի աղայի, որպէս հարուստ մարդուն, խնդրելով նրանից իրեն կարեաց չափ օգնել մեր սոված եղբայրներին։ Մեր պարոնը փոխանակ նուիրելու, մի քանի անվայել խօսքերով մեր սիրտը կոտրեց։ Թէև այսպիսի դէպքումն հազար այդպէս խօսքեր չեն կարող մի հայի սիրտը կոտրել, բայց մի և նոյն ժամանակ խնդրում ենք այդ պարոնին տանձ դնել բերնին։ Չէ՞ր կամենում, թող չը նուիրէր։

Ա. Պ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

30 յունիսի

«Մարդասիրական ընկերութիւնը» դարձեալ որոնում է տեսուչ իր երկսեռ դպրոցների համար։

Այս զարմանալի երևոյթը ճշդութեամբ կրկնվում է ամենայն տարի։ Կարծես թէ տարաբաղդ ընկերութեանը վիճակված է միշտ տեսչի մուրացկանութիւն անել։

Զարմանալին այն է, որ մինչև այսօր գտնված տեսուչներն էլ եղել են դանդաղ, անգործունեայ, տկար և այլ պակասութիւնների տէր մարդիկ, և չը նայելով այս ամենին, դարձեալ կարողացել են խաբել ամբողջ խորհրդին։ Եւ ինչպէս է յաջողվում այդ անձանց խաբել խորհրդի անդամներին, որոնք տասն կամ քսան տարիներ պարապելով վաճառականութեամբ. հասել են ճարպիկութեան և խորամանկութեան վերին ծայրին։ Ես կարծում եմ, որ տեսուչների խաբեբայութեան յաջողութիւնը պէտք է բացատրել նորանով, որ խորհրդի անդամները լինելով մեծ մասամբ անկիրթ և անզարգացած մարդիկ, ճարպիկ և խորամանկ են միայն վաճառականութեան մէջ, որպէս նորանց մասնագիտութիւնը, իսկ միւս գործերի մէջ, որոնց վրա մտածել անգամ դժուարանում են, ինչպէս մանկավարժութիւնը, նորանք արտայայտում են բոլորովին երեխայական հասկացողութիւն և լիովին գրավվում են տեսչի կամ ուսուցչի գանգան բարձրը և սուտ խոստումներով։ Հաւատալի է արդեօք, որ տեսուչ Լ. Թուսիկեանցը իր վեց կամ եօթն ամիս անգործ և դատարկ ծառայութեան համար ստացել է ընկերութեան գանձարանից շատ աւելի, քան թէ ամբողջ տարվայ ռոճիկը, բայց այդ ստոյգ է։ Երբ Թուսիկեանը արդէն գնացել էր Բագուից, և իր տանը նստած, հանդիստ և փառաւոր կերպով վայելում էր իր խորամանկութեան և տմարդութեան պտուղները, և ծածուկ ծիծաղում էր ընկերութեան անդամների թեթևամտութեան և դիւրահաւանութեան վրա, նոր միայն հասկացաւ ընկերութեան խորհուրդը, որ ինքը խաբված է տեսչից և կորցրած է բաւական մեծ գումար, բայց արդէն ուշ լինելով լռեց։

Համարեա մի և նոյն տեսակ վարվեց ընկերութեան հետ և պ. Ստեփանեանը, այս տարվան տեսուչը, միայն այն զանազանութեամբ, որ Թուսիկեանը ընակվեց ուսումնարանում չորսնակ 6—7 ամիս, թէև բոլորովին անօգուտ ուսումնարանին վերաբերեալ, իսկ Ստեփանեանը այցելեց ընկերութեան ուսումնարանը միջին թւով ընդամենը հինգ ամիս, թէև նոյնպէս բոլորովին անօգուտ, ինչպէս նոյնը վկայում են և խորհրդի անդամները, իսկ մնացեալ միւս ուսումնական ամիսները նա զոհեց ըստ իր պարտականութեան զանազան քաղաքային և զիւղային արքունական ուսումնարաններին այցելութեան և այդ բացակայութեան ժամանակ նա ստանում էր և տեսչի և ուսուցչի ռոճիկ։ Լսում ենք, որ պ. Մ. Պողովեանը առաջարկել է ընկերութեան իր ազատ ժամանակը ուսումնարանը կառավարելու համար, խորհուրդը նորան տուել է թէական պատասխան։

Ընկերութեան խորհուրդը հրաւիրում է պ. Ղուկասեանին ուսումնարանի համար տեսուչ, իսկ եթէ սա չը յաջողվի, այն ժամանակ մտադիր է յանձնել ուսումնարանը նորա մէջ ուսուցիչ Աւագ Գրիգորեանին, «Սոխակի» հրատարակչին։ Մենք մեր կողմից ոչինչ չենք կարող ասել պ. Ղուկասեանի մասին, չը ճանաչելով նորան, իսկ ինչ վերաբերում է պ. Գրիգորեանին, կասենք միայն, որ եթէ պատահմամբ նա նշանակվեց տեսուչ, այն ժամանակ մենք «Ընկերութեան» խորհուրդ կը տայինք, և վերջապէս կը խնդրէինք չը հոգալ ամենևին ազգային լուսաւորութեան վրա, որովհետև այդ տեսակ տեսուչների և ուսուցիչների ձեռքով նա ոչ միայն չէ լուսաւորում ազգը, այլ աւելի ևս խաւարեցնում է ազգի խեղճ և տառապեալ մանուկներին։

* * *

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Голосъ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Голосъ» լրագրին գրում են Կ. Պօլսից հետևեալը։

Վերջին օրերում Կ. Պօլսի քրիստոնէաբնակ բաժինները հաղուագիւտ տեսարան էին ներկայացնում։ Հեռաւոր և սովատանջ Հայաստանից այստեղ հասած մի քանի հազար երեխաներ իրանց համար հայ և բնակարան են փնտռում։ Ասում են, որ տարաբաղդ երեխաների կէսը մեռաւ երկար ճանապարհորդութեան ժամանակ, որոնց ուղեկցում էին մայրերը և քահանաները։ Հայրերը նրանց վաղուց թողել էին։ Նրանք խոստացել էին իրանց երեխաների ապրուստը հեռաւոր օտար երկիրներից ուղարկել, բայց ամիսները միմեանց ետևից անցնում էին և խոստացած օգնութիւնը չէր հասնում։ Ցուսահատված մայրերը և երեխաները վրձռել են ճանապարհ ընկնել հայրերի շաւղով մայրաքաղաքը, յուսալով այստեղ մի կտոր հաց գտնել։

Հէնց որ այս ողորմելի երեխաների առաջին խումբը հասաւ, հայոց պատրիարք Ներսէսը հրամայեց զանգահարութեամբ հրաւիրել մայրաքաղաքի քրիստոնեայ բնակիչներին անպաշտպան հիւրերին օգնելու համար։ Տարաբաղդ ճանապարհորդների տեսքից շարժված՝ հայուհիները ողբալով տանում էին նրանց իրանց տները։ Երէկ բոլոր եկեղեցիների մէջ մաղթանքներ կատարվեցան, որոնց ներկայ էին հայուհիները սգի հագուստներով։ Նրանց ընկերակցում էին խեղճ որբերը, իրանց բարերարուհիներին կապած և նրանց ձեռքերը ամուր բռնած։

Ի պատիւ հայուհիների պէտք է ասել, որ նրանք բուն մայրական քնքշութեամբ վերաբերվեցին Հայաստանից եկած երեխաներին, որոնք չափազանց մաքուր էին հագնված։ Երեխաների մէջ բազմաթիւ շիկահերներ կան,

---

Նրա դէմքը խժռուվեցաւ։

«Ո՞ւրեան են, գոչեց աստիճանաւորը, ասացէք։»

Նա չը պատասխանեց։

Բայց սեաւ հեծելազօրները մօտենում էին արդէն և շրջապատում էին անտառները։

Օրը մթնում էր։ Ամենայն կողմից լսվում էր թնդանօթի որոտը։

Տիկին Ժերարը սարսափելով լսում էր թնդանօթի իւրաքանչիւր ճայթիւնը արձագանք էր գտնում նորա սրտի մէջ։

Յանկարծ նա նկատեց մարդկանց ստուերներ, որ անցնում էին գայլուկ կոչված բոյսերի մէջով և մօտենում էին զգուշութեամբ։

«Մայր, ասաց մի ձայն, մենք ենք։

—Մտէք չուտ, ասաց նա։

Քառասուն տղամարդ, մէկը միւսի ետևից մտան դաստակերտը։

Մի վայրկենում զիմադրութիւնը պատրաստ էր։

Նոքա ժողովեցին սայլեր, երկրագործական գործիքներ, մանգաղներ, կահկարասիք և չինեցին մի բարձր պատնէշ։ Նոքա փեղկերի և դռների մէջ ծակեր բաց արին։

Եւ նոքա սպասեցին։

Լուսինը դանդաղ կերպով բարձրանալով լեռների միջով, լուսաւորեց հովիտը հրեղէն գնդի նման։

Հեծելազօրները, որ ցրիւ էին եկած ազատ հրացանաձիգների հրացանների արձակումից, կրկին միացան և շտապով դառնում էին դէպի դաստակերտը։

Սարսափելի, շատ սարսափելի յարձակումն ըսկսվեցաւ։

Պատնէշը ոչնչացրին։ Ծակված դռները և փեղկերը թոյլ էին ընդդիմադրութեան համար։ Դաստակերտը յափշտակած կը մնէր։ Ազատ հրացանաձիգները պիտի ընկնէին կատաղի թշնամիների ձեռքը։

Տիկին Ժերարը անվեհերութեամբ ներկայ էր գտնվում, սպասում էր այդ մենամարտութեան վախճանին։

Այս կռիւը անօգուտ գտնելով, մի քանիսը առաջարկեցին անձնատուր լինել։

«Անձնատուր լինել, աղաղակեց կինը,—Երբէք, դուք ուրեմն չէք ճանաչում նրանց։ Նրանք ոչ պատիւ, ոչ խիղճ ունեն։ Նրանք ձեզ կը սպանեն։ Ոչ, ոչ, փախէք, այն կողմը, փախէք։

Ետևից մի անցք բացելով, նա վերցրեց խուրձեր, նոցանից մի ջահ շինեց և վառեց։

«Փախէք», կրկնեց նա։

Եւ նա իր դաստակերտին կրակ տուաւ, այն դաստակերտին, ուր պարունակվում էին նորա բոլոր յիշատակները, նորա քսան տարվայ աշխատանքի և խնայողութեան պտուղները։

Հրդեհը կանգնեցրեց թշնամուն։

Բայց ազատ հրացանաձիգները, այդպիսի հերոսական գործով փրկված, մի քանի օրից յետոյ ընկան սեաւ հեծելազօրների ձեռքը։

Նրանց երկար ընդդիմադրութիւնից զայրանալով, պրուսացիք հնարեցին մի անգութ վրէժխնդրութիւն։

Երբ Երանք հեռացան Նեիվելերից, տիկին Ժերարը, որ պատսպարված էր Կրիստինայի մօտ, նորա հետ միասին վերադարձան դաստակերտը։

Երբ նրանք մօտենում էին՝

—Նայիր, ասաց Կրիստինան, սեղմվելով մօրը,—ինչ է երևում ճանապարհի մօտ։ Կարծես թէ զինուորներ են։ Պրուսացիք են, թէ Ֆրանսիացիք։ Ինչպիսի անշարժութիւն։ Եւ ինչ զարմանալի բան, նրանց ոտները գետնին չեն կպչում։

Տիկին Ժերարը դողդողուն սրտով, վախից լայնացեալ բիբերով, նայում էր առանց պատասխանելու։

Ճշմարիտ, այդ ինչ կը նշանակէ։

Փոքր ինչ մօտենալով, նրանք ճանաչեցին ազատ հրացանաձիգների նշանագլխները։

Նրանք չտապեցին։

Զարհուրանք... Այդ դիակները կախված էին։ Նրանց կապտագոյն, արիւնալից երեսները զարհուրելի կերպով այլանդակած էին։

Վայրենիները, նախ քան կը կախէին ազատ հրացանաձիգներին, կտրել էին նրանց քթերը և ականջները, և դուրս էին հանել ճանապարհի եզերքի վրա, որպէս օրինակ անցորդների համար *)։

Այդ սարսափելի տեսարանի առջև, տ. Ժերարը զարհուրելի տրտմութիւնից կոկորդը սեղմված, ոչ մի խօսք չը կարողացաւ արտասանել։ Նա խելագարի նման վազում էր մէկ դիակից դէպի միւսը, աշխատելով ճանաչել այս և այն այլանդակ դիակների մէջ իր որդուն, իր սիրելի Ֆրանցին։

Նա վերջինն էր այն անբախտ կախվածների շարքում։

Այն ժամանակ բռնելով կատաղաբար իր աղջկայ ձեռքը ասաց՝

«Երբէք, լսում ես, Կրիստինա, երբէք չես ամուսնանայ այս բարբարոսներից մէկի հետ։ Ես աւելի լաւ կը համարեմ քեզի մեռած տեսնել, քան թէ ամուսնացած մէկ գերմանացու հետ։

(Կը շարունակվի)

*) Այդ հրէշաւոր դէպքը ճշմարիտ պատահել է Ալզասում։

որոնք չափազանց գեղեցիկ են և այնպիսի քնքույշ դէմք ունեն, որ կարծես ամենահոգատար մարդկերանց մեծացրած լինեն:

Փոքր-Ասիայի սովալլուկներին օգնող կենտրոնական մասնաժողովի անդամները, որոնք կանոնաւոր յարաբերութիւններ չունեն Թիւրքաց Հայաստանի գլխաւոր կէտերի հետ, որովհետև սրանք կատարեալ պաշարված դրութեան մէջ են, կարծում էին, որ Հայաստանի մէջ սովը վերջացած է: Այդ պատճառով նրանք դադարեցին նուիրատուութիւններ հաւաքել և օգնութիւն հասցնել սովեալներին: Ցանկարծ Հայաստանի խորքերում սկսած երեխաների սխուր ճանապարհորդութիւնը նրանց զգալ տուեց, որ սովը դեռ ևս տիրապետում է Հայաստանի մէջ: Ներսէս պատրիարքը և մասնաժողովի անդամները ամեն կողմ դիմեցին, աղաչելով օգնութիւն հասցնել և արագ օգնութիւն հասցնելու համար տեղացի բանկիրներից 35,000 Թիւրքաց լիրա փոխ առան, որ ռուսաց փողերով 350,000 բուբլու է հաւասարվում: Տարաբաղդաբար սովի հետ Հայաստանի մէջ տարափոխիկ հիւանդութիւններ են տարածված:

Եթէ Թիւրքաց կառավարութեան գործադրած միջոցները, Հայաստանի մէջ տիրապետող սովի մասին եղած խօսակցութիւնները լռեցնելու համար, սառեցրին հասարակութեան եռանդը սովալլուկներին օգնելու համար, այս սառնութեանը նպաստեցին նոյնպէս Էրզրումի ռուսաց գլխաւոր հիւպատոսի հանդստացնող զեկուցումները: Հիւպատոսը անդադար կրկնում էր, որ Հայաստանի մէջ սովը վերջացած է և որ այնտեղ ամեն բան լաւ է գնում: Ի նկատի առնելով այն հաւատարմութիւնը, որ ունեն տեղացի հայերը դէպի Ռուսաստանը և նրա ներկայացուցիչները, ձեզ համար հեշտ կը լինի երևակայել, թէ ինչպիսի ծանր հարուած տուեց հայերի սրտերին ռուսաց գլխաւոր հիւպատոսի անհասկանալի գործունէութիւնը: Այս հանգամանքը շատ նպաստող է ռուսների եւրոպական թշնամիներին, որոնք իրանց թղթակցների բերանով կը յայտնեն, որ ռուսաց և Թիւրքաց պաշտօնավարները միացել են Փոքր-Ասիայի քրիստոնեաներին ՀԱՍԵԼու համար:

Հայաստանից այստեղ հասած լուրերից երևում է, որ ռուսաց ներկայացուցիչները Էրզրումի, Դիարբէքիրի և Աղեպպոյի մէջ չը կարողացան քրիստոնեաների համակրութիւնը գրաւել, մինչդեռ այդ կողմից նրանք ամենանպաստող պայմաններով են շրջապատված: Դժուար է երևակայել մի բան, որ աւելի մեծ լինի այն հեղինակութիւնից և ժողովրդականութիւնից, որ վայելում է ռուսաց անունը ամբողջ Թիւրքաց Հայաստանի մէջ. զրեթէ բոլոր ազգային հայ ուսումնարաններում իւրաքանչիւր շաբաթ երգվում է ռուսաց հիմնը:

Հայերի դէպի Ռուսաստանը ունեցած համակրութեան մի այլ ապացոյց կարող լինել և այն ցոյցը, որ արին հայերը անցեալ տարի Դիարբէքիրի մէջ, երբ ռուսաց հիւպատոսը մտնում էր այդ քաղաքը: Նրան թագաւորական ընդունելութիւն արին: Ամբողջ վիլայեթի առաջնորդը ազգաբնակութեան հետ հոգևոր երգեր երգելով և զգեստաւորված եկեղեցականներով քաղաքից 10 վերստ առաջ գնաց հիւպատոսին դիմաւորելու համար:

Այժմ այդ պատիւների նոյն հերոսները բոլորովին ուրիշ կերպ են ընդունվում քրիստոնեաներից: Այս ցաւալի երևոյթի պատճառը այն է, որ ռուսաց ներկայացուցիչները չեն իրացրել այն դերի իսկական նշանակութիւնը, որ նրանք պէտք է կատարեն Հայաստանի մէջ, իսկ այդ դերը Բերլինի կոնգրէսից յետոյ բոլորովին այլ քաղաքական շանակութիւն ստացաւ, քան թէ առաջ: Ռուսաց ներկայացուցիչները մինչև այժմ այնպէս են վերաբերվում իրանց պաշտօնին, կարծես նրանք նշանակված են Հայաստանի մէջ մի քանի ռուսահպատակ առևտրականների շահերը պաշտպանելու համար:

Նրանք չեն հոգում բաւականութիւն տալ այն քաղաքական պայմաններին, որոնցով այժմ շրջապատված են հայերը իրենց սեփական Հայաստանի մէջ:

Այս փաստերը ի նկատի ունենալով, ազգով հայ գնդապետ Կամսարականին Վանի մէջ հիւպատոս նշանակելը մի բաղդաւոր միտք է:

ԱՄԵՐԻԿԱ

Լրագիրներին Նիւ-Եորկից գրում են հետևեալը:

Ամերիկացիների բոլոր ուշադրութիւնը ներկայումս բացառապէս երկու առարկաների վրա է դարձրած: Որտեղ էլ գնաք, մասնաւորտուն, թէ հասարակական ժողով ամեն տեղ կը լսէք խօսակցութիւններ բժիշկ Տաններին և հունձքի մասին: Ամենից շատ խօսում են բժիշկ Տաններին, այսինքն այն մարդու մասին, որ առաջարկեց քառասուն օր ծոմ պահել: Հասարակութեան մեծամասնութիւնը առաջ անուշադիր եղաւ դէպի նա, նրա առաջարկութեան մէջ շարլատանութիւն նկատելով: Ինքը Տանները հաւատացնում է, որ այդ փորձը սկսել է գիտութեանը ծառայելու համար, որպէս զի կարողանայ ապացուցանել, թէ որքան կերակրող նիւթ կայ ջրի մէջ և միւս կողմից, որ մարդու կազմուածքի մէջ ժամանակից գիտութեանը անյայտ մի ոյժ կայ, որ կարող է պահպանել մարդու կեանքը առանց կերակուրի:

Իր հայրենի նահանգի բժիշկ լինելով, Տաններ վաղուց աշխատում էր քարոզել իր գաղափարը և չէր ծածկում իր համոզմունքը Ամերիկայի գիտնական և յայտնի բժիշկներից: Հասկանալի է, որ նահանգական բժշկի բառացի յայտնութիւնները անուշադիր էին մնում, այնպէս որ Տաններ առաջարկեց իր գիւտը իր վրա փորձել: Միակ բանը, որ պահանջել էր Տաններ իր հակառակորդից, խիստ բժշկական հսկողութիւնն էր, որպէս զի ծոմից յետոյ Տաններին ոչոք չը կասկածէ. և ահա 24 օր է ինչ Տաններ պահում է իր ծոմը և բժիշկները ամենայն խստութեամբ հսկում են նրա վրա: Նրա մօտ, փոփոխվելով, անընդհատ գտնվում են երեք բժիշկներ և մի լրագրի թղթակից:

Ամենից շատ վնասեց Տաններին այն հանգամանքը, որ առաջին 17 օրվայ ծոմապահութենից յետոյ իր մարմնի ծանրութենից պակասեց 24 ֆունտ, իսկ հետևեալ օրերը աւելացաւ 5 ֆունտ: Ինքը Տաններ հաւատացնում էր, որ ծանրութիւնը աւելացաւ խմած ջրի պատճառով, որ այս իրողութիւնը յայտնի է իրան նախկին փորձերից և որ ծանրութիւնը նորից կը պակասի, որովհետև խմած ջուրը չէ կարող ծոմապահութեան պատճառած կորուստը վարձատրել: Տանների խօսքը արդարացաւ. նրա ծանրութիւնը հետևեալ օրերը նորից պակասեց: Ծոմապահութեան 13-դ օրը նկատվեցաւ, որ ծոմապահի բարձրութիւնը մի դիւյիմով պակասեց:

Բժշկի կեանքի միակերպութիւնը ընդհատում էին այցելուները, որոնք չափազանց ձանձրացնում էին Տաններին իրանց հարց և փորձերով: Բժիշկը հանդստանում էր այն ժամանակ, երբ այցելուհիներից մէկը սկսում էր դաշնամուրի վրա ածել:

Տաններ սկզբից անդադար կռւում էր հրսկող բժիշկների հետ, որովհետև նկատում էր, որ նրանք իր փորձին կասկածանքով և անուշադիր էին վերաբերվում և կարծում էր, որ այդպիսով ստիպում են չը հաւատալ իր ծոմապահութեան հետևանքներին: Օրվայ մեծ մասը Տաններ քնում էր, լրագիրներ և հեռագիրներ էր կարդում, իսկ առաւօտները իր պահպան բժիշկների ուղեկցութեամբ զբօսնում էր ձիով: Ամենը սկսեցին ուշադրութիւն դարձնել Տանների վրա, իսկ նրա եղբայրակից բժիշկները հարցրին նրանից, թէ ինչ պէտք է անել նրա մարմնի հետ, եթէ նա մեռնի: Տաններ պատասխանեց, որ նա հաւատացած է, թէ կապրի 40 օր առանց կերակուրի, բայց եթէ նրա յոյսերը չարդարանան, այն դէպքում իր մարմինը տալ բժշկներին, որպէս զի նա կարողանայ ծառայել Տանների սիրած գիտութեանը:

Ինքը Տաններ հոգում էր նրա մասին, թէ 40 օրից յետոյ ինչպիսի կերակուր ընդունէ և նա այն եղրակացութեանը հասաւ, որ ամենայարմարը ձմերուկն է: Զարմանալի է, որ Տաններ երբէք կերակուրներ չէր ցանկանում, այլ զանազան մրգեր: Հեռագիրը հաղորդեց, որ Տաններ աջողութեամբ վերջացրեց 40 օրվայ իր ծոմապահութիւնը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքից յուլիսի 26-ից գրում են հետևեալը:

Դեռ ևս չէ ստացվել Բ. Դրան պատասխանը պետութիւնների միաձայն պահանջին, բայց նայելով Թիւրքաց գօրքերի տեղափոխութեանը Յունաստանին զիջած նահանգների սահմանների վրա, կարելի է ենթադրել որ պատասխանը բացասական կը լինի: Երևի այս ենթադրութիւնն է պատճառ, որ յունական կառավարութիւնը սկսում է դուրս գալ իր անտարբեր դրութիւնից:

Բացի այն, որ Յունաստանին զիջած նահանգների մահմետական բնակիչները ընդունվում են յունական կամաւոր զօրքերի մէջ, զինուորական մինիստրը հրամայեց զինաւորել այն բոլոր երիտասարդ յոյներին, որոնք արդէն հասել են 21 տարեկան հասակին: Այդ երիտասարդների թիւը 15,000-ի է հասնում: Երբ կը գումարվի յունական պարլամենտը, կառավարութիւնը 30000 պատրաստ զօրք կունենայ և համարձակ կարող է կռիւ սկսել Թիւրքերի հետ: Զանազան տեղերից հաղորդում են, որ յոյները ամեն օր կամաւորներ են գրվում և որ նրանց թիւը շուտով 6000 կը հասնի:

Եանինայից գրում են հետևեալը: Յուլիսի 4-ին տեղացի քրիստոնեաները և մահմետականները անհամբերութեամբ սպասում էին Բ. Դրանը պետութիւնների գրութեան յանձնելու հեռագրին, բայց մինչև օրվայ վերջը ոչինչ լուր չը ստացվեցաւ: Միւս օրը Թիւրքերի մէջ մի առանձին շարժում և անհանգստութիւն էր նկատվում, բայց ոչոք չէր համարձակվում դրա պատճառը հարցնել, որովհետև դեռ յուլիսի 3-ից յայտնված էր, որ պատերազմական դրութեան օրէնքները արդէն ոյժ են ստացել և գործադրվելու են Եպիրոսի բոլոր քաղաքներում: Թիւրքերի անհանգստութիւնից երևում էր, որ Կ. Պոլսից վատ լուրեր են ստացվել: Եանինայի մէջ բնակվող անուանի ալբանցիները հրաման են ստացել ալբանցիներին ոտքի կանգնեցնելու համար: Մահմետական բոլոր բնակիչներին Թիւրքաց կառավարութիւնը պատերազմական պաշարներ և Հենրի-Մարտինի ձևի հրացաններ է բաժանել: Այժմ անկասկածելի է, որ ալբանական շարժումը և մահմետականների ապստամբութիւնը քրիստոնեաների դէմ Թիւրքաց կառավարութենից է թելադրվում: Մի քանի օր սրանից առաջ հասաւ այստեղ սուլթանի ադիւտանտը մահմետականներին քրիստոնեաների դէմ դրդելու համար: Կառավարութեան բռնած այս ընթացքի հետևանքը այն եղաւ, որ մահմետականները սպառնում են քրիստոնեաներին կողոպտել նրանց, այրել քաղաքը և շրջակայ գիւղերը և քրիստոնեաների ընդհանուր կոտորած անել: Պրոմեզի անգէն քրիստոնեաները անդադար երկիւղի մէջ են: Նրանց յոյսը եւրոպական և յունական կառավարութիւնների վրա է: Աւազակները Զագորի մէջ անպատիժ կողոպտում են ամբողջ գիւղեր: Եանինայի մէջ քրիստոնեաները չեն քնում, վախենալով գիշերը զոհվել Թիւրքաց մոլեռանդութեանը:

Արտայից ստացված տեղեկութիւններից երևում է, որ այնտեղ էլ քրիստոնեաների դրութիւնը աննախանձելի է: Պրեվեզայի մէջ գտնվում է Եանինայի զինուորական և քաղաքային նահանգապետը, որ իւրաքանչիւր օր հրաւիրում է անուանի Թիւրքերին և խորհուրդ է կազմում: Թէ Պրեվեզան և թէ Արտայի ամբողջ սահմանագիծը շտապում են ամրացնել, որպէս զի դժուարացնեն յոյների յարձակումը: Արտայի Թիւրքաց ապստամբութեան մասնաժողովը բացարձակ գործում է և Թիւրքերի ասածներից երևում է, որ քրիստոնեաների կոտորածը անհրաժեշտ է, որովհետև Թիւրքերը Բերլինի կոնգրեսնցիայի վճռից յետոյ չափազանց յուսահատված են: Թիւրքաց կառավարութիւնը լուր է տարածել Արտայի մէջ, որ շուտով այնտեղ հասնելու են 30,000 զինաւորված ալբանցիներ, բայց այդ լուրը սխալ է և տարածված է տեղացի Թիւրքերին ապստամբեցնելու նպատակով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի: Բարձրագոյն հրամայված է. Բարձրագոյն Կարգադրող մասնաժողովը փակել և նրա գործերը ներքին գործերի մինիստրութեանը յանձնել, 2) Երրորդ բաժինը ոչնչացնել և յանձնել նրան ներքին գործերի մինիստրութեանը: Մակսիմ ստացաւ դէյստվիտելնի տայնի սովետնիկի աստիճանը և նշանակվեցաւ փոստային և հեռագրական մինիստր և օտար դատութիւնների դեպարտամենտների գլխաւոր: Մինիստրների մասնաժողովի գործերի կառավարիչ տայնի սովետնիկ Կախանով ստացաւ դէյստվիտելնի տայնի սովետնիկի աստիճան և նշանակվեցաւ ներքին գործերի մինիստրի օգնական: Ներքին գործերի մինիստրի օգնական Մարտինով արձակված է պաշտօնից և սենատի անդամ է նշանակված:

ՇԱՆԽԱՅ, 7 օգոստոսի: Պաշտօնապէս հաղորդում են, որ Զունգ-խօու վերջնականապէս արձակված է կալանաւորութենից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 օգոստոսի: Այսօր Ցզենգ և Եանիգավրա դեսպանները Ցարսկոյ Սելոյի մէջ ներկայացան Թագաւոր Կայսրին հանդիսաւոր տեսութեան ժամանակ: Տեկինի ռուսաց դեսպանը հեռագրում է Գիրսին, որ չը վերջացած գործերի վճիռներ այստեղ կատարված են բաւականացուցիչ կերպով: Զանիսու Ցզենգի զեկուցման համեմատ արձակված է բանտից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի: „Голосъ" լրագրին Կ. Պոլսից գրում են. Ասում են, Գուսարների լէյբ-գվարդիայի գունդի ռուսաց նախկին գնդապետ, Դաղեստանի բնակիչ Մահմադ-փաշա կը փոխարինէ Բումելիայի մէջ միլիցիայի հրամանատար Նարեկերին: Պատրիարք Ներսէսը օրերում Բույուկ-Դէրէյի մէջ հանդուցեալ Թագուհու երկրորդ հոգեհանգիստը կատարեց: Ներկայ էին ռուսաց դեսպան Նօվիկով իր ամուսնու հետ և դեսպանատան բոլոր ծառայողները: Դեսպանի շնորհակալութեանը Ներսէս պատասխանեց. «Նախանձամութիւնը աւելի լաւ չէր կարող վարձատրել հայ ազգին, քան թէ կոմս Լորիս-Մելիքովին բարձրացնելով այն հայերի առաջնորդ, որոնք իրանց կեանքը նուիրում են ռուսաց Թագաւորի ծառայութեանը:»

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԷՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ

«ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ»

Թիֆլիս-Կուկիայում Ալէքսէյևսկի փողոցի վերայ Ռոստոմ Մանդինեանի տանն:

Օգոստոսի 20-ին կը սկսուին նորեկների քննութիւնները և ընդունելութիւն. ուսումնարանն ընդունելու է գիշերօթիկ և կիսաթոշակ աշակերտներ:

2—6 (2)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆԴՊՐՈՑԻՑ

Առաջիկայ 18⁸⁰/₈₁ ուսումնական տարին, ցանկացողների համար Սեմինարիա (վարժապետական դպրոցը) մտնելու, կան 4 վականսիաներ պատրաստական դասատան և 6 վականսիաներ առաջին դասատան մէջ: Խնդիրքները ընդունելութեան մասին տրվում են մինչև 15 օգոստոսի: Մրցողական հարցաքննութիւնները կը լինեն 20 օգոստոսից մինչև նոյն ամսի 25:

3—3 (1)

Ծախվում են ԳՐԱՍԵՂԱՆ, ՀԱՅԻ ՍԵՂԱՆ և ԱԹՈՌՆԵՐ: Ելիսավետինսկայա փողոց № 46 Թիֆլիսում:

5—5

Նուտով լոյս կը տեսնէ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՀԱՄԱՐ ՁԱՅՆԱԳՐԱԾ ժողովրդական գործածական երգերի

Երկրորդ տետրակը

Ձայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուզանաձեանցի, և կը պարունակէ իւր մէջ վեց երգեր:

1) «Ազնիւ ընկեր մեռանում եմ»
2) Ակնապիշ անձայն»
3) «Բաժակներ առնունք, եղբա՛րք»
4) Մեր հայրենիք, Թշուառ անտէր»
5) «Հայոց աղջիկներ» և
6) «Հայրենիք Սրբազան»

Երկրորդ տետրակի գինը լինելու է մի րուբլի. ցանկացողները ստանալ դաշնամուրի համար ձայնագրած երգերի առաջին տետրակը, որ պարունակում է իւր մէջ չորս երգեր. 1) «Անի քաղաք». 2) «Ինձ համար, չէ». 3) Ցուրտը փչեց» և 4) «Ծիծեռնակ» պէտք է ուղարկեն մի րուբլի. տասից աւելի գնողներին 20 % զիջումն է լինում:

Նոյն հեղինակի մօտ վաճառվում է նոր ԵՐԳԱՐԱՆ ՖՐԷՑԳՈՒՆԻ, որի մէջ պարունակվում են 50 հատ ընտիր նոր հրատարակված երգեր: Գինը 30 կոպէկ: Ցանկացողները ստանալու և՛ ձայնագրած երգերը, և՛ ֆրէյտունի նոր երգարանը, պէտք է ուղարկեն մէկ րուբլի և 30 կոպկ. հետեւեալ հասցէով: Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджянцъ На Петхаинской ул. собственный домъ № 13.

Համեմատեցէք անգլիական խանութի թէյի գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 բուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

48—100

Գայանեան և Ներսէսեան դպրոցների ուսուցիչ պ. Վարձելեանը իր գերդասան մէջ ընդունում է միայն ՉՈՐՍ գիշերօթիկ աշակերտուհիներ: Դիմել ուղղակի «Մշակի» խմբագրութեանը:

2—5

ՋԱՆՋՈՒՂԱՋՕՎԻ ՄԵԾ ՄԱՂԱԶԻՆՈՒՄ շարունակվում է վերջնական վաճառումն ամեն օր ժամը 9-ից առաւօտեան մինչև 12 կէսօրի, թէ բակում և թէ մաղազինում:

2—4



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրոգիստների մօտ գլխաւոր դէպօ նիւթի հնարող Ֆարմացիի մասիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլէկտորալնի փողոց, № 5: Գալմանինի մէջ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է ընդունել խարդախումներից:

18—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ (1

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀՅՈՒՐԱՍԷՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉՍԷ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյխ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդվօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի կիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւաւոտեան 0 բրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ ՀՐԱՏԱՐԱԿ

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրավաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԷՈՆԵԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև Հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիզի Հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

19—20

Աղէքսանդրապոլու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց. Աստուր Խաչակեանց.

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդիսի ներկայ ամի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդաց: Այս տետրիս մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութն՝ նկարուած և փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Այվազեան աբք եպիսկոպոս, Միքայէլ Միանսարեանց, Նուբար-Փաշա, Կարին քաղաք, Պետրբուրգայ Հայոց եկեղեցին, Սրճարան Հայոց 'ի Կարին, Սոմեալ Հայ ընտանիք 'ի Վ՝ան, Վ՝ան քաղաք, Կազմ Հայերէն աւետարանին, Նուիրելոյ 'Նորին Կայսերական Մեծութեան 'ի Կաթուղիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են այսուհետև իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ.:

Տփխիսում ստանալ կարելի է պ. Զ. Գրիգորեանցի և Կենդրոնական գրավաճառանոցներում:

Հրատարակիչ Զարմայր Մ. Մսերեանց:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորեկների ընդունելութիւնը տղայոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵԼՈՒ Է ՊԱՆՍԻՈՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆՎԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Միրիմանեանց

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՅԻՆ կից կը բացվեն ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ՋՐԵՐ:

31—40

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՅՐԱԾ հայոց ծիսական և մասնաւոր ուսումնարանում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐՔԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում. Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆԳԻԱՆՋԵԱՆՑԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

9—22

ՄԻՆԱՍ ԳԻՒԼԶԱՏԵԱՆ, որ կանտորայ ունի ԹԱՒՐԻԶ քաղաքում, ընդունում է ամեն տեսակ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կամ սիօնով կատարելու անյապաղ, ամենայն ճշտութեամբ, և դիմում է պ. պ. վաճառականներին, առաջարկելով իր ծառայութիւնը:

5—5

Дозволено Цензурою 11 Августа 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона.